# ՇՆՈՐՀԱՎՈՐ ՀԻՆ ՆՈՐ ՏԱՐԻ

## ԹՈՂ ԻՐԱԿԱՆԱՆԱՆ ԲՈԼՈՐԻ ԻՂՁԵՐՆ ՈՒ ՃԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 3 - 4 (16500) ՇԱԲԱԹ, 14 ՀՈՒՆՎԱՐԻ 2017 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ


## ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐ ՎԻՐԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ



«Թանկագի'ն հայրենակիցներ, ի սրտե շնորհավորում եմ Սուրբ Ծնունդն ու Աստվածահայտնությունը: Հայերի եւ վրացիների բարեկամությունը ներառում է այնքան տարի, որքան մեր երկրի պատմությունն է: Անգնահատելի է ձեր ավանդը՝ Վրաստանի շինարարության ու զարգացման գործում: Մենք, այնպես, ինչպես ձեր պատմական հայրենիք Հայաստանը, հպարտանում ենք նաեւ այստեղ ծնված մշակույթի հայ գործիչներով, գիտնականներով ու հասարակական գործիչներով:

Միանում ենք ձեր ուրախությանը եւ մաղթում, որ 2017 թվականը դառնա առողջության, երջանկության, խաղաղության ու բարօրության տարի՝ ձեր եւ ձեր ընտանիքների համար»,- ասված է Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու շնորհավորական ուղերձում:



«Մեր հայ համաքաղաքացիներին եւ եղբայրական հայ ժողովրդին շնորհավորում եմ Քրիստոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի առթիվ:

Գովարժան է, որ մենք պահպանել ենք բարեկամությունն ու եղբայրությունը, որոնք շարունակվում են դարեր ի վեր: Հավատում եմ, որ վրացիները եւ հայերը սիրով ու հարգանքով կշարունակեն համակեցությունը եւ է'լ ավելի կամրապնդեն մեր երկրները:

Մաղթում եմ բոլորին խաղաղություն, բարեկեցություն եւ հաջողություններ»,- ասված է Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու շնորհավորական ուղերձում:

## ԱՄԱՆՈՐՅԱ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ՝ «ՎՐԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻՆ ԵՎ ՎԻՐԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ

Պարոն Վան Բայբուրթյան.



Նոր տարվա եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ ցանկանում եմ ջերմորեն շնորհավորել Ձեզ, «Վրաստան» թերթի անձնակազմին եւ ձեր բազմահազար ընթերցողներին, որոնց թվում են նաեւ կրթության ոլորտի ներկայացուցիչներ, աշակերտներ, ծնողներ: Թերթի միջոցով նրանք պարբերաբար տեղեկանում են կրթության բնագավառում իրականացվող ու ծրագրվող նորությունների մասին:

Թող 2017 թվականը երջանիկ տարի լինի ձեր եւ յուրաքանչյուր ընթերցողի համար: Մաղթում եմ առաջընթաց ու ձեռքբերումներ՝ անձնական կյանքում եւ աշխատանքային գործունեության մեջ:

Հարգանքով՝

***ԱԼԵՔՍԱՆԴՐԵ ՋԵՋԵԼԱՎԱ***

***Վրաստանի կրթության եւ գիտության նախարար***

### ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՆՈՐ ՏԱՐԻՆ



Շնորհավորում եմ «Վրաստան» թերթի ընթերցողներին, Վրաստանում ապրող իմ հայ եղբայրներին, մեր երկրի սահմաններից դուրս գտնվող հայազգի ներկայացուցիչներին, բոլոր նրանց Նոր տարին, ում համար նշանակալի է վրացիների եւ հայերի բազմադարյա պատմական, մշակութային հարաբերությունները:

Շնորհավորում եմ Ամանորի եւ Սուրբ Ծննդի, այդ իրոք բացառիկ ու յուրահատուկ տոնի առթիվ, որը հույսով ու հավատով սպասումներ է առաջացնում, ջերմացնում՝ սրտերը, միավորում՝ բոլորին:

Մաղթում եմ հոգեկան հանգստություն եւ ֆիզիկական հզորություն: Թող Նոր տարին բերի բազում ուրախություններ ու հաղթանակներ, խաղաղություն հաստատվի բոլոր ընտանիքներում, չպակասի բարիքը, բարօրությունը, թող հաջողությունն ուղեկից լինի ձեզ՝ նոր՝ 2017 թվականին:

***ՊԱԱՏԱ ԽԻՋԱՆԱՇՎԻԼԻ***

***Քվեմո Քարթլիի տարածաշրջանում պետական լիազոր-նահանգապետ***

Սիրելի' հայրենակիցներ.



Ջերմորեն եւ սիրով շնորհավորում ենք Ձեզ՝ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ, մաղթում՝ առողջություն, երջանկություն, կորով ու վճռականություն՝ ապրելու, արարելու եւ ազգանպաստ Ձեր առաքելությունն իրականացնելու համար:

Նոր Տարվա գալուստն ավետող ամեն զանգ՝ Հայրենիքում եւ ամբողջ աշխարհում, թող ավետիս դառնա ու հնչեցնի նորօրյա բազում հաղթանակների եւ բարեկեցության հիմնը, մեր երկրին պարգեւի այնքա՜ն սպասված խաղաղությունը:


(Շարունակությունը՝ 2-րդ էջում)


Պարոն Վան Բայբուրթյանին.



Թանկագի'ն բարեկամ, շնորհավորում եմ Ձեր եւ ձեր գլխավորած խմբագրության աշխատակիցների, թերթի ընթերցողների ու բարեկամների Նոր տարին եւ Սուրբ Ծնունդը: Օգտվելով առիթից՝ իմ ամանորյա մաղթանքներն եմ հղում նաեւ Թբիլիսիի Իսանիի շրջանի իններորդ ընտրատարածքի բոլոր ընտրողներին, նրանց ընտանիքներին, մաղթում ամենայն բարիքներ ու հաջողություններ՝ նոր՝ 2017 թվականին:

***ԴԱՎԻԹ ՃԻՃԻՆԱՁԵ***

***Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր***

Պարոն Վան Բայբուրթյանին.



Ի սրտե շնորհավորում եմ «Վրաստան» թերթի աշխատակիցների Ամանորն ու Սուրբ Ծնունդը, մաղթում հաջողություններ՝ ձեր վսեմ առաքելության կատարման գործում:

Օգտվելով առիթից՝ իմ խորին շնորհակալությունն ու ամանորյա մաղթանքներն եմ հղում Ծալկայի շրջանի բնակիչներին: Թանկագի'ն բարեկամներ, դուք վստահության քվե եք հանձնել ինձ, եւ ես կրկին խոստանում եմ հնարավորինս անել կարգավորելու ձեզ հուզող հիմնախնդիրները: Շնորհավոր Նոր տարի եւ Սուրբ Ծնունդ:

***ԿԱԽԱ ՕՔՐԻԱՇՎԻԼԻ***

***Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր***

«Վրաստան» թերթի խմբագրությանը.



Հարգարժա'ն բարեկամներ, հանձինս Ձեզ՝ Վրաստանի հայկական թերթի աշխատակիցներիդ, ի սրտե շնորհավորում եմ թերթի ընթերցողների եւ ողջ վիրահայության Ամանորն ու Սուրբ Ծնունդը:

Թանկագի'ն «Վրաստանցիներ», թերթին մաղթում եմ երկարակեցություն, հաջողություններ՝ վրաց-հայկական դարավոր բարեկամության ամրապնդման գործում ձեր առաքելությանը:

Շնորհավոր Նոր տարի եւ Սուրբ Ծնունդ:

***ՌՈՒՍԼԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ***

***Վրաստանի խորհրդարանի պատգամավոր***

Սիրելի' հայորդիներ.



Ջերմորեն շնորհավորում ենք Ձեզ՝ Ամանորյա եւ Սուրբ Ծննդյան նվիրական տոների կապակցությամբ: Աղոթում ենք Բարձրյալ Աստծոն, որ մեր Երկնավոր Հայրը արեւշատ տարիներ, հոգեւոր երջանկություն ու հաջողություններ պարգեւի ամենքիդ:

Անցնող՝ 2016 թվականը, Վրաստանի հավատացյալ հայության համար եղավ արգասաբեր տարի: Մեր համայնքային, մշակութային հաստատությունները մասնակցեցին համահայկական տարբեր փառատոների ու ծրագրերի: Ուխտագնացությունների միջոցով վրացահայությունը հաղորդակից դարձավ Հայաստան աշխարհի եւ Արցախի սրբություններին ու տեսարժան վայրերին, գործուն մասնակցություն ունեցավ Վիրահայոց թեմի բազմաբնույթ ծրագրերին եւ միջոցառումներին: Թեմի «Հայարտուն», «Ռաֆայել Ջավախ», «Ալեքսանդր Մանթաշով» կրթամշակութային եւ երիտասարդական կենտրոնների գործունեության եւ Վրաստանում գործող պետական ու հասարակական, մշակութային եւ կրթական հաստատությունների ջանադիր աշխատանքի շնորհիվ՝ պահպանվեց մշակութային միջավայրը, եւ վրացահայությունն ըմբոշխնեց իր մեծերի արարումները՝ թատերական, դասական երաժշտության, ազգագրական երգի ու պարի, գրականության եւ արվեստի բնագավառներում:

Շարունակվեց եկեղեցաշինությունը, հատկապես Ջավախ-


(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

# ԱՄԱՆՈՐՅԱ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ՝ «ՎՐԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻՆ ԵՎ ՎԻՐԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

քում: Թեմի եկեղեցիներում կանոնավոր կերպով կատարվեցին ժամերգություններ ու պատարագներ, մեր հոգեւոր սպասավորներն իրենց անմնացորդ ծառայությամբ Ավետարանով մխիթարեցին եւ հավատքի ջերմեռանդություն ներշնչեցին հավատավոր մեր ժողովրդին:

Սիրելի քույրեր ու եղբայրներ, գալիք՝ 2017 թվականը, հավատացյալ մեր ժողովրդի համար թող լինի նորանոր նվաճումների ու ձեռքբերումների տարի: Այն նույնպես հագեցած է լինելու մեր տաճարների վերանորոգությամբ, հոգեւոր ու մշակութային կյանքի աշխուժացմամբ: Առանձնահատուկ նշանակություն է ունենալու Թումանյանական «Վերնատան» բացումը՝ Մեծն Բանաստեղծի թբիլիսյան տանը: Կընդլայնվեն Բաթումիի՝ «Ալ.Մանթաշով» կենտրոնի շենքային պայմանները, եւ առաջընթացի նոր հնարավորություն կստեղծվի: Աշխատանքներ կտարվեն Ծալկայի շրջանում՝ կրթամշակութային եւ երիտասարդական կենտրոնի հիմնման ուղղությամբ:

Վիրահայոց թեմը, արդյունավետ աշխատանքների եւ համագործակցության համար, այս տոնական առիթով իր շնորհավորանքներն ու սերն է փոխանցում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, Վրաց Պատրիարքարանին, Վրաստանի եւ Հայաստանի իշխանություններին, Սուրբ Գեւորգ եկեղեցու վերանորոգման հիմնադրամի հոգաբարձուներին, «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IdeA) հիմնադրամին, «Զինիշյան» հիշատակի հիմնադրամին, Վրաստանում եւ Հայաստանում գործող կրոնական, պետական ու հասարակական հաստատություններին:

Հավատում ենք՝ մեր ժողովրդի աշխատասիրությամբ կերտված լուսավոր ներկային ու ապագային: Մենք առաքելություն ունենք աշխարհում եւ՝ դեռեւս չիրականացված երազանքներ:

Հարյուրամյակներով սրբագործված Սուրբ Ծննդյան տոնը հույսի ու հավատի աղբյուր է հանդիսանում մեր ժողովրդի համար: Դրանք դառնում են նոր արարումների ու տեսիլքների աղբյուր, խթան՝ նորանոր ձեռքբերումների ու նվաճումների:

Թող Բեթղեհեմի Սուրբ Մսուրում մարդացած Աստված օրհնի քրիստոսասեր եւ հայրենանվեր մեր ժողովրդին, խաղաղ պահի հայոց ու վրաց երկինքը, ամրացնի հայերի եւ վրացիների հազարամյակների բարեկամությունը, անսասան պահի Հայ Առաքելական ու Վրաց Ուղղափառ եկեղեցիների քրիստոնեական համագործակցությունը՝ ի փառս հավատացյալների հոգեւոր ուրախության եւ ընտանեկան երջանկության:

Քրիստոս ծնվեց եւ հայտնվեց, մեզ եւ ձեզ մեծ ավետիս:

*Աղոթքով եւ օրհնությամբ՝*
***ՏԵՐ ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ***
***ԱՌԱՋՆՈՐԴ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ***

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Թող սփյուռքում ապրող ամեն հայի սիրտ տրոփի ազգի, հայրենիքի, ընտանիքի ու ուկեղենիկ Հայոց լեզվի պահպանման համար:

Աստված մեզ պատգամեց սեր, մենք հավելում ենք միասնականություն՝ ամեն տեղ ու ամեն ինչում, որը հայության համար հիմք է ապրելու եւ հարատեւելու, հատկապես աշխարհում տիրող այս անօրինակ քաոսի եւ դաժան պատերազմների ժամանակաշրջանում: Մաղթում եմ ամրություն՝ հայրենյաց սահմաններին, խաղաղություն՝ անմեղ զոհերի հոգիներին, հավատ ու անպարտելի ոգի՝ բոլորիս:

Եղեք երջանիկ եւ թող գալիք 2017 թվականն ու Սուրբ Ծննդյան լույսն ու ավետիսն առաջնորդեն ձեզ եւ համայն հայ ժողովրդին դեպի միասնություն, հաղթանակներ ու նպատակների իրականացում:

Հարգանքով ու գնահատանքով՝
***ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ***
*Հայաստանի Սփյուռքի նախարար*

**Պարոն Վան Բայբուրթյանին.**



Սիրելի՛ բարեկամ, շնորհավորում եմ Ձեր Նոր տարին եւ Սուրբ Ծնունդը: Իմ ամանորյա շնորհավորանքներն եմ հղում ձեր գլխավորած խմբագրության բոլոր աշխատակիցներին, բազմահազար ընթերցողներին, մաղթում՝ երջանկություն եւ առաջընթաց:

Օգտվելով առիթից՝ ամանորյա մաղթանքներն եմ հղում նաեւ Բորժոմիի շրջանի եւ Ախալքալաքիի մի քանի գյուղերի բնակիչներին, ում շահերը ես ներկայացնում եմ Վրաստանի խորհրդարանում: Թանկագին բարեկամներ, անկեղծ սրտով շնորհավորում եմ Ամանորն ու Սուրբ Ծնունդը: Ամենայն բարիք ու հաջողություն՝ ձեզ եւ ձեր ընտանիքներին:

***ԳԵԴԵՈՆ ՓՈՓԽԱՁԵ***
*Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր*

**«Վրաստան» թերթի խմբագրությանը.**



Թանկագի՛ն բարեկամներ, շնորհավորում եմ ձեր Նոր տարին եւ Սուրբ Ծնունդը, մաղթում՝ հաջողություններ եւ առաջընթաց:

Իհարկե, մեծ սիրով դիմում եմ իմ ախալցիխեցիներին ու ադիգեյցիներին: Օգտվելով առիթից՝ շնորհավորում եմ ձեր Ամանորն ու Սուրբ Ծնունդը, կրկին ցանկանում եմ վստահեցնել, որ, արժանանալով ձեր վստահությանը, ջանք չեմ խնայի, որպեսզի ձեր հոգսերն ու մտահոգությունները հասցնեմ վերադաս մարմիններին, նպաստեմ դրանց լուծմանը:

Շնորհավոր Նոր տարի եւ Սուրբ Ծնունդ:

***ԳԻՈՐԳԻ ԿՈՊԱՁԵ***
*Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր*

**«Վրաստան» թերթի խմբագրությանը.**



Գիտեմ, ինչպես են սիրում եւ սպասում ձեր թերթի ամեն մի համարի մեր շրջանում:

Թանկագի՛ն համերկրացիներ, շնորհավորում եմ ձեր Նոր տարին ու Սուրբ Ծնունդը, մաղթում՝ հաջողություններ եւ երջանկություն:

Սիրելի՛ ծալկացիներ, մեծ սիրով բարեմաղթանքներ եմ հղում ձեզ: Մաղթում առաջընթաց, երջանկություն, բարեկեցություն՝ ձեզ եւ ձեր ընտանիքներին:

***ԻԼԻԱ (ՋՈՆԻ) ՍԱԲԱՁԵ***
*Ծալկայի մունիցիպալիտետի վարչության նախագահ*



Սիրելի՛ Ընթերցող եւ իմ լավ բարեկամ, թույլ տուր դիմել Քեզ այդպես, որովհետեւ արդեն վաղուց է, ինչ ճանաչում ենք միմյանց, եւ հերթական հանդիպման առիթը Ամանորն է եւ Սուրբ Ծնունդը: Մենք ծանոթացել, առնչվում ենք մեր սիրելի «Վրաստան» թերթի միջոցով: Պարբերականն ամեն անգամ ինձ հնարավորություն է տալիս ձեզ հետ կիսելու՝ կրթության ոլորտի բարեփոխումների, նորությունների ու սպասվող իրադարձությունների վերաբերյալ տեղեկատվություն: Սիրելի՛ Ընթերցող եւ սիրելի՛ խմբագրակազմ, տոնական պատեհությունն օգտագործելով, ուզում եմ շնորհավորել ձեզ Ամանորի ու Սուրբ Ծննդյան լուսավոր տոների կապակցությամբ: Մաղթել, որ մեր շփումները լինեն դրական, արդյունավետի շուրջ եւ նոր լիցք ու եռանդ փոխանցեն ձեզ: Հավատում եմ, որ նոր՝ 2017 թվականը, ձեզ կպարգեւի սիրո, ջերմության բերկրալից պահեր, կհաղորդի այն ուժը, որ կարողանաք հաղթահարել դժվարություններ, կբացի հույսի ու հավատի նոր ճանապարհներ եւ կարծանագրի աշխատանքային նորանոր ձեռքբերումներ ու հաջողություններ:

Շնորհավոր Նոր տարի եւ Սուրբ Ծնունդ:

Հարգանքով՝

***ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ***

***Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության՝ ոչ վրացալեզու դպրոցներում ուսումնական նյութերի ներդրման փորձագետ***

# ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

***2017 թվականին, Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության առաջին տաղավար տոնի առթիվ, Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցվեց Վիրահայոց թեմի եկեղեցիներում: Դեռեւս հունվարի 5-ի երեկոյան՝ Սուրբ Ծննդյան նախատոնակին, Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եւ Սուրբ Էջմիածին եկեղեցիներում մատուցվեց ճրագալույցի Սուրբ Պատարագ:***



Հավատացյալներով լեփ-լեցուն Սուրբ Էջմիածին եկեղեցում պատարագիչն էր Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

Մինչ Սբ. Պատարագի սկսվելը, կատարվեց Երեկոյան ժամերգություն, ընթերցվեցին Սուրբգրային տարբեր հատվածներ:

Հավարտ Սբ. Պատարագի՝ Թեմակալ առաջնորդը վառեց կենսատու մոմը, որից Հիսուս Քրիստոսին խորհրդանշող լույսը բաշխվեց հավատացյալներին:

Պատարագի արարողությունից հետո՝ հոգեւորականների թափորը շարժվեց դեպի «Հայարտուն» կենտրոն եւ կատարվեց տնօրհնեք:

Հունվարի 6-ին, Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում, Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցեց Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը: Հայոց եկեղեցի այցելեցին եւ Սուրբ Ծննդյան տոնական Պատարագին ներկա գտնվեցին Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարար Քեթեւան Ցիխելաշվիլին, Վրաստանի խորհրդարանի անդամներ Ռուսլան Պողոսյանը, Դավիթ Ճիճինաձեն, Վրաստանի նախագահի ազգամիջյան հարաբերությունների հարցերով խորհրդական Սոփիո Շամանիդին, Թբիլիսիի Սակրեբուլոյի նախագահ Գիորգի Ալիբեգաշվիլին, Վրաստանի կրոնի հարցերով պետական գործակալության նախագահ Զազա Վաշաղմաձեն, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ներկայացուցիչ Կարինե Մանուկյանը, բանաստեղծ, թարգմանիչ Գիվի Շահնազարը, Վրաստանում Հայաստանի դեսպանության խորհրդական Կարեն Մելիքյանը, հասարակական գործիչներ:

Հընթացս Սբ. Պատարագի՝ Վիրահայոց թեմի առաջնորդն ընթերցեց Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը՝ Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի առթիվ: Եկեղեցում տարածվեց Մանուկ Հիսուսի Ծննդյան եւ Աստվածահայտնության ավետիսը:

Սբ. Պատարագի վերջում, Թեմակալ առաջնորդի հանդիսապետությամբ, կատարվեց Ջրօրհնեքի արարողություն եւ Եկեղեցու Խաչի կնքահայր վերստին դարձավ արժանավոր հայորդի Յուրի Երեմյանը:

Սուրբ Պատարագից հետո՝ տեղի ունեցավ ավանդական հայկական գաթայի տոն:

* * *

Սամցխե-Ջավախեթիի ընդհանուր առաջնորդական փոխանորդության Ախալքալաքիի Սուրբ Խաչ եկեղեցում, տոնական Սուրբ Պատարագ մատուցեց եւ Սուրբ Ծննդյան տոնի առթիվ հավատացյալներին շնորհավորեց առաջնորդական փոխանորդ, հոգեշնորհ Տեր Բաբգեն վարդապետ Սալբիյանը:

Բաթումիի Սուրբ Փրկիչ եկեղեցի այցելեցին եւ հավատացյալներին Սուրբ Ծննդյան տոնի կապակցությամբ շնորհավորեցին Աջարիայի Ինքնավար Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Դավիթ Գաբաիձեն, Գերագույն խորհրդի անդամ Իլիա Վերձաձեն, Կրթության, գիտության եւ սպորտի նախարար Ինգա Շամիլաշվիլին, Բաթումիի քաղաքապետ Գիորգի Երմակովը, Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր հյուպատոս Հոսսեին Մաշհադին, Աջարիայի Ինքնավար Հանրապետությունում ՀՀ Գլխավոր հյուպատոս Եղիշե Սարգսյանը:

Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի կապակցությամբ Սուրբ Պատարագներ մատուցվեցին Վրաստանում գործող բոլոր հայկական եկեղեցիներում եւ կատարվեցին ջրօրհնեքի արարողություններ:

Հավատացյալները վերադարձան իրենց տները՝ տոնական տրամադրությամբ եւ սուրբ մյուռոնով օրհնված ջրով:

## ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՍԱՐՅԱՆ. «ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՀՈՒԶՈՂ ՇԱՏ ՀԱՐՑԵՐ ԼՈՒԾԵՑԻՆՔ, ԹԵՊԵՏ ԱՌԱՋԻԿԱՅՈՒՄ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ՇԱ՜Տ-ՇԱՏ ԵՆ»



Իրականացված եւ ընթացքի մեջ գտնվող ենթակառուցային նախագծերի առումով, 2016 թվականը որոշակիորեն բացառիկ էր Ախալքալաքի մունիցիպալիտետի համար:

- ***Ինչպիսի՞ն էր 2016 թվականը, եւ ի՞նչ եք սպասում 2017-ից:***

Այս հարցով մենք դիմեցինք Ախալքալաքի մունիցիպալիտետի վարչության նախագահ Էդուարդ Աղասարյանին:

- Ծրագրված նախագծերի իրականացման համար՝ մեր մունիցիպալիտետում հայտարարվեց 99 մրցույթ՝ զգալիորեն ավելի նախորդ տարիների համեմատությամբ: Այդ մրցույթներով նախատեսված նախագծերի հանրագումարային արժեքը կազմում էր 8.068.997 լարի: Մրցույթները վերաբերում էին նոր օբյեկտների շինարարության, ճանապարհների ու կամուրջների կարգավորման, «Գյուղի օգնության ծրագրով» նախատեսված աշխատանքների, ջրամատակարարման, խմելու եւ ոռոգման համակարգերի, մանկապարտեզների վերանորոգման եւ այլ ենթակառուցային նախագծերի: Նշեմ. որ, հայտարարված մրցույթների շնորհիվ, այդ առումով մենք կարողացանք տնտեսել շուրջ 725 հազար լարի: Համեմատելու համար նշենք, որ ենթակառուցային այդ նախագծերի համար ծախսվեց ավելի քան 3 միլիոն լարի, ավելի ստույգ՝ 3.2 միլիոն լարի, ինչը գրեթե եռակի գերազանցում է նախորդ՝ 2015 թվականի ցուցանիշը:

Ասեմ նաեւ, որ ավարտվեց 1.031.285 լարի արժողությամբ Ախալքալաքի-Բավրա ավտոճանապարհի կարգավորման նախագիծը, հաջողությամբ եզրափակվեց Ախալքալաքի փողոցների ասֆալտապատման 1.552.719 լարի արժողության ծրագիրը եւ այլն:

- ***Իսկ ի՞նչ կասեիք սոցիալական նախագծերի իրականացման մասին:***

- Նշեմ, որ տարվա ընթացքում այդ ուղղությամբ իրականացված միջոցառումները որոշակիորեն պարտադրեցին վերանայել 2016 թվականի բյուջեում այդ նպատակներով հատկացված գումարները: Ծախսերը շատ ավելի եղան, քան ծրագրել էինք: Անկեղծ ասած, ոչ միայն չեմ ափսոսում, որ այդպես է եղել, ավելին՝ հպարտանում եմ, որովհետեւ սոցիալական ծրագրի յուրաքանչյուր ավելացված հոդվածի հետեւում կոնկրետ մարդիկ են, ընտանիքներ...

Բյուջեի սոցիալական ծախսերի հոդվածում նախատեսված 688.000 լարիից միջոցներ ենք հատկացրել վիրաբուժական միջամտության, դեղորայքի գնման, բժշկական շտապ օգնության, միայնակ մայրերի, որբ երեխաների, հաշմանդամների, սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց, բազմազավակ ընտանիքների, պատերազմի ու Վրաստանի տարածքային ամբողջականության համար զոհվածների ընտանիքների, կարիքավորների օգնության համար: Տրվել են միաժամանակյա դրամական նպաստներ:

Բյուջեում, յուրաքանչյուր նորածնի համար, ծրագրել էինք 250-ական լարի: Դրա համար նախատեսել էինք 170.000 լարի: Ուրախությամբ ցանկանում եմ նշել, որ բյուջեի այդ հոդվածը ստիպված եղանք վերանայել, քանի որ, նախորդ տարվա համեմատությամբ, այս տարի շրջանում 130-ով ավելի երեխա է ծնվել, հետեւաբար, հատկացված գումարը ավելացվեց 20.000 լարիով:

Ամանորի առթիվ, շրջանում ապրող պատերազմի 13 վետերաններին, փոխանցվեց 300-ական լարի, 333 բռնագաղթվածների եւ սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց՝ 100-ական լարի:

- ***Առաջիկայում ի՞նչ ծրագրեր ունեք:***

- Առաջիկա ծրագրերն ընդգրկուն են ու մասշտաբային: Կշարունակվեն ենթակառուցային նախագծերը: Բյուջեն, 2017-ի եկամտային եւ ծախսերի հատվածով, սահմանված է 8.147.000 լարի:

Ծրագրում ենք ջեռուցում անցկացնել Ախալքալաքի Սուրբ Խաչ, ավարտել տեղի վրացական եւ Բարալեթիի եկեղեցիներում Ախալքալաքի փողոցների ասֆալտապատումը, վերջնականապես լուծել Տրկնա, Բեժանո եւ Ալաթուման գյուղերում ջրամատակարարման հարցը, վերանորոգել մունիցիպալային սեփականության ներքո գտնվող շինությունները, Խուլգումո գյուղի մանկապարտեզը, Ախալքալաքիում կառուցել մինի խաղահրապարակ: Կշարունակվի նորածիններին, սոցիալապես անպաշտպան ընտանիքներին, սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց, միայնակներին, որբերին, բռնագաղթվածներին, վետերաններին բժշկական անհետաձգելի օգնության ցուցադրումը:

Մի խոսքով, անելիքները շատ են:

Օգտվելով առիթից՝ ցանկանում եմ բոլոր ախալքալաքցիներին, մեր ժողովրդին շնորհավորել՝ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ, մաղթել քաջառողջություն, երջանկություն, հաջողություններ ու առաջընթաց:

## ԳԱԳԻԿ ԿԱՐՍԼՅԱՆ. «ԱՆՑԱԾ ՏԱՐՎԱ ԲԱՑԱՌԻԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՓՈՐՁԵՆՔ ԴԱՐՁՆԵԼ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ»



Եզրագիծը հատեց 2016 թվականը: Յուրաքանչյուր տարեմուտ յուրովի սահմանագիծ է՝ կատարված ու կատարելիք գործերի հստակեցման ու ընկալման գործում: Ինչպիսի՞ն էր 2016-ը Նինոծմինդայի մունիցիպալիտետի համար, ի՞նչ հետք թողեց այն այդ բարձրալեռ երկրամասի կյանքում: Այս եւ մունիցիպալիտետին առնչվող այլ հարցերին, «Վրաստանի» խնդրանքով, պատասխանում է Նինոծմինդայի մունիցիպալիտետի վարչության նախագահ Գագիկ Կարսլյանը:

- ***Ավարտվեց 2016-ը: Ինչո՞վ էր այն յուրահատուկ Նինոծմինդայի մունիցիպալիտետի համար:***

- Միանգամից ասեմ, որ այն իր առաջընթացով ու ձեռքբերումներով բացառիկ էր նաեւ մունիցիպալիտետի առջեւ ծառացած մարտահրավերներով ու հիմնախնդիրներով: Մեր տարածաշրջանի պատմության մեջ դժվար է գտնել 2016-ից առավել ձեռքբերումներով նշանավորված տարի: Բավական է նշել, որ թե' կենտրոնական, թե' տեղական իշխանությունները լրիվությամբ կատարեցին շրջանի բնակչությանը տված խոստումները, իրականացվեցին ծրագրված ու տարվա ընթացքում հանպատրաստից ծագած գրեթե բոլոր նախագծերը: Դրանում համոզվելու համար, բավական է՝ թռուցիկ հայացք գցել տարվա ընթացքում մեր կողմից կատարված աշխատանքների հաշվետվության վրա:

- ***Եկեք կոնկրետանանք՝ որքա՞ն է ծախսվել, եւ ի՞նչ է արվել:***

- Խնդրեմ: Անցնող տարում Նինոծմինդայի մունիցիպալիտետի բյուջեն կազմում էր 8 միլիոն 688 հազար լարի, որից 2 միլիոն 898 հազարը հավասարեցման տրանսֆերներն էին, 1 միլիոն 898 հազար 500 լարին կազմում էր եկամտային հատվածը, 1.292.000 լարին՝ փոխանցված մնացորդն էր, եւս 1.615.000 լարին ստացվեց տարածաշրջանային զարգացման հիմնադրամից, 380 հազարը՝ բարձրալեռ տարածաշրջանների զարգացման հիմնադրամից, 572 հազարը՝ գյուղի աջակցության ծրագրից: Մունցիպալիտետում իրականացված ծրագրերի համար վերոնշյալ գումարներին տեղական բյուջեից ավելացավ 1.950.000 լարի:

Ինչպես արդեն նշեցի, 2016 թվականը, յուրովի բեկումնային դարձավ մեր տարածաշրջանում ենթակառուցային նախագծերի իրականացման առումով: Գրեթե բոլոր ուղղություններով կոնկրետ աշխատանքներ են կատարվել: Մասնավորապես, իրականացվել են ճանապարհների կարգավորման, ծիսակարգային տների, մանկապարտեզների, ջրամատակարարման համակարգերի, խաղահրապարակների եւ այլնի կարգավորման նախագծերը:

300.000-ական լարի հատկացվեց ներքին ճանապարհների խճապատման, ինչպես նաեւ ծիսակարգային տների վերանորոգման համար: Կարգավորվել են Սպասովկա-Օռլովկա, Փոկա-Վլադիմիրովկա, Նինոծմինդա-Օրոջալար միջգյուղային, Մեծ Խանչալիի, Փոկայի, Ջիգրաշենի, Օրոջալարի, Փոքր Արագյալի, Գորելովկայի ներքին ճանապարհները: Անմիջականորեն կարգավորվեցին Նինոծմինդայի, Ժդանովականի, Գորելովկայի, Տամբովկայի, Օրոջալարի, Եֆրեմովկայի, Ուչմանայի ծիսակարգային տները:

- ***Իսկ ի՞նչ կասեիք առաջիկա ծրագրերի մասին:***

- Ինչպես ասացի, 2016 թվականը մեր մունիցիպալիտետի համար բացառիկ էր, այժմ մեր խնդիրն է՝ այդ բացառիկությունը վերածել օրինաչափության:

2017 թվականի համար էլ ծրագրված են նշանակալի նախագծեր: Ժամանակին դրանց մասին հասարակայնությանը կտեղեկացնենք:

Օգտվելով առիթից, ցանկանում եմ մեր նինոծմինդացիներին, ողջ Վրաստանին շնորհավորել Նոր տարվա եւ Սուրբ Ծննդի առթիվ, մաղթել առաջընթաց, հուզող հիմնախնդիրների կարգավորում:

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

## ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԿՈՄԻՏԵՆ ՊԱՇՏՊԱՆԵՑ ՎՐԱՍՏԱՆԻՆ ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻ ՇՆՈՐՀՈՒՄԸ




***Եվրախորհրդարանի քաղաքացիական ազատության, արդարադատության եւ ներքին գործերի կոմիտեն պաշտպանեց Վրաստանին անայցեգրային պայմանակարգի շնորհման որոշումը: Վերոնշյալը առաջընթաց հերթական քայլ է Վրաստանի քաղաքացիներին անայցեգրային պայմանակարգի շնորհման ճանապարհին:***

Կոմիտեական քվեարկությանը մասնակցեցին 45 պատգամավորներ, որից 42-ը պաշտպանեցին անայցեգրային պայմանակարգի շնորհումը, երկուսը՝ հանդես եկան դեմ, իսկ մեկը՝ գերադասեց մնալ ձեռնպահ:

Իսկ ինչ վերաբերում է Եվրախորհրդարանի լիագումար նիստում վերոնշյալ հարցով քվեարկությանը, ապա այն կանցկացվի ընթացիկ տարվա փետրվարին:

Հիշեցնենք, որ 2016 թվականի դեկտեմբերի 13-ին Եվրախորհրդարանն ու Եվրամիության խորհուրդը համաձայնության հասան այն հարցում, որ Վրաստանի քաղաքացիներին կընձեռվի առանց այցեգրերի Շենգենյան գոտու երկրներ այցելելու իրավունք:

ՊԱՌԱԿՏՈՒՄ

## «ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ» ՄԱՍՆԱՏՎԵՑ

***Դատելով ստեղծված իրավիճակից, ժամանակին կառավարող «Միասնական ազգային շարժում» (ՄԱՇ) կուսանկցությունը վերջնականապես բաժանվեց Միխեիլ Սաակաշվիլու կողմնակիցների ու նրանց միջեւ, ովքեր ցանկանում են իրենց քաղաքական գործունեությունը շարունակել առանց նախկին նախագահի եւ նրա ազդեցության:***

Հունվարի 12-ին, կուսակցության շարքերից դուրս գալու մասին, հայտարարեցին կուսակցության մի քանի տասնյակ լիդերներ: Մասնավորապես, «Միասնական ազգային շարժման» շարքերը լքեցին Գիգա Բոկերիան, Գիվի Թարգամաձեն, Դավիթ Բաքրաձեն, Գիգի Ուգուլավան, Գիորգի Գաբաշվիլին, Սերգո Ռատիանին, Իրմա Նադիրաշվիլին, Խաթունա Գոգորիշվիլին, Գիորգի Կանդելակին, Գիորգի Ծերեթելին, Ակակի Բոբոխիձեն, Թենգիզ Գունավան, Էլենե Խոշտարիան, Օթար Կախիձեն:

Ավելացնենք, որ, մինչ այդ, կուսակցությունից հեռացել էին Միխեիլ Մաճավարիանին եւ Դավիթ Դարչիաշվիլին:

ՁԼՄ-ների հաշվարկներով, ընդհանուր առմամբ, վերջին ժամանակներում ՄԱՇ-ի շարքերը թողել են նախկինում կուսակցության կազմակերպություններում ղեկավար պաշտոններ զբաղեցնող 59 անդամներ:

Ինչպես հայտարարեցին կուսակցությունից հեռացած Միխեիլ Սաակաշվիլու նախկին կուսակիցները, ներկա դրությամբ, իրենք կմիանան իրենց նախկին կուսակցությունից ծագված «Եվրոպական Վրաստան» կուսակցությանը:

Միխեիլ Սաակաշվիլու համակուսակիցների թվում են մնացել Նիկա Մելիան, Նիկա Ռուռուան, Նուգզար Ծիկլաուրին, Ռոման Գոցիրիձեն, Պետրե Ցիսկարիշվիլին եւ ուրիշներ:

Նշենք, որ, ՄԱՇ-ից մի շարք առաջատար դեմքերի դուրս գալու կապակցությամբ, օրակարգի հարց դարձավ նաեւ խորհրդարանում ՄԱՇ-ի խմբակցությունների անվանման ու կազմի փոփոխությունը, քանզի ներկայիս գումարման խորհրդարանում ՄԱՇ-ը ներկայացնող 27 պատգամավորներից 21-ը հայտարարել են խմբակցությունից դուրս գալու մասին: Հարցականի տակ է նաեւ՝ Միխեիլ Սաակաշվիլուն հավատարիմ պատգամավորների կողմից խորհրդարանական խմբակցության ստեղծման հարցը, քանզի դրա կազմավորման համար անհրաժեշտ է վեց պատգամավորի անդամակցություն, իսկ տվյալ պարագայում հարցի լուծումը կախված է ՄԱՇ-ի ցուցակով խորհրդարանի պատգամավոր ընտրված Ազիմ Սուլեյմանովի դիրքորոշումից:

*Էջը պատրաստեց՝*
***ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ***